ՀԱՄԱՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ
«ԲԱԶՄԱԶԳ ՎՐԱՍՏԱՆ»

Եվրոպական ընտրություն՝ ճանապարհի դեպի ապագա

Թբիլիսի
2016 թ.

Հրատարակությունը պատրաստված է Համաքաղաքացիական շարժում «Բազմազգ Վրաստանի» կողմից Ժողովրդավարության աջակցման Ազգային հիմնադրամի աջակցությամբ (NationalEndowmentforDemocracy), «Օժանդակություն տարածաշրջաններում խիտ բնակեցված էթնիկ փոքրամասնությունների քաղաքացիական հասարակության զարգացմանը» նախագծի շրջանակներում: Հրատարակության բովանդակության համար պատասխանատվություն կրում է միայն համաքաղաքացիական շարժում «Բազմազգ Վրաստանը»: «Բազմազգ Վրաստանի» հայացքները կարող են չհամապատասխանել Ժողովրդավարության աջակցման Ազգային հիմնադրամի կարծիքին:

Բովանդակություն.

1. Ներածություն

2. «Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման Համաձայնագրի» ընդհանուր քաղաքական համատեքստ

3. «Վրաստանի և Եվրամիության ասոցացման համաձայնագրի» նպատակները»

4. «Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիրը» ստորագրող կողմերի ստանձնած պարտավորությունները

5. «Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագրի» էությունը

6. Ազատ առևտրի խոր և համապարփակ գոտի

7. Ընդհանուր պետական բարօրություն՝ ստացված ազատ առևտրի խոր և համապարփակ գոտու ստեղծումից

8. Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու ստեղծումից առաջացած Պետական պարտավորություններ և նրանց իրականացման արդյունքները

9. «Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագրի» իրականացումից առաջացած ընդհանուր հասարակական օգուտ

10. «Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիրը» և նրա իրականացման ընթացքում գոյություն ունեցող մարտահրավերները

1. Ներածություն

«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիրն» իրենից ներկայացնում է Վրաստանի նորագույն պատմության ամենահավակնոտ և ծայրահեղ նշանակալից մարտահրավերներից մեկը: Համապատասխանաբար, վրացական իշխանությունների կողմից նախաստորագրման և համաձայնագրի ստորագրման հետևանքով, հետագայում, Եվրամիության և Վրաստանի հարաբերությունների միջև սկսվեց նոր փուլ, որը, հավանաբար, կխորացնի քաղաքական, տնտեսական և առևտրական հարաբերությունները Եվրամիության և Վրաստանի միջև:

Իրավիճակի վերլուծությունը բացահայտում է, որ մի կողմից Վրաստանի կառավարությունը պետք է շարունակի ռեֆորմների գործընթացը, որպեսզի մոտենա Եվրամիության չափանիշներին և պրակտիկային այն առաջնահերթային ոլորտներում, ինչպիսիք են համարվում դատական իշխանության անկախության աճ, արդարադատության հասանելիություն և արդարացի իրավական իրավունքի ապահովում; գաղթի կառավարում և արդյունավետ պայքար մարդկային առևտրի դեմ (թրաֆիքինգ); պայքար կազմակերպված հանցագործության և կաշառակերության դեմ, անծանոթ թմրանյութային միջոցների շրջանառության կանխարգելում և ակտիվ պայքար դրանց դեմ, անձնական տվյալների և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման պաշտպանության ապահովում և այլն: Մյուս կողմից, Եվրամիությունը պետք է մեծ ջանք գործադրի Վրաստանի եվրոպական ինտեգրման գործընթացն աջակցելու համար:

Այդ ֆոնի վրա Վրաստանի բնակչությանն աջակցելը եվրոպական ինտեգրման ընթացակարգի հարցում և Վրաստանի կառավարության ջանքերը՝ երկիրը մոտեցնել Եվրամիության չափանիշներին և պրակտիկային, շատ կարևոր և հրատապ բնույթ է ստացել այն լայն հասարակական մարտահրավերների ֆոնի վրա, որոնք վրաց հասարակության մեջ աչքի են ընկնում իրենց աճով:

Մասնավորապես, Վրաստանի քաղաքացիները, այդ թվում՝ էթնիկ փոքրամասնությունները, «Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագրից» ծագող շատ աղքատ տեղեկատվության են տիրապետում ինչպես եվրոինտեգրման ընթացակարգերի, այնպես էլ ընդհանուր հասարակական բարօրության մասին (աճող սոցիալական և տնտեսական հնարավորություններ, մարդկանց պաշտպանության և ժողովրդավարության բարձրագույն իրավունքների մակարդակ,

ինչպես նաև անվտանգության բարձր որակ և այլն): Հաշվի առնելով նշվածը, վրաց հասարակության, առավել ևս էթնիկ փոքրամասնություններին դասվող խմբերի տեղեկատվածությունը խիստ կարևոր է և իրենից ներկայացնում է անհետաձգելի խնդիր այնքանով, որքանով համաձայնագրի իրականացումը տեղափոխվում է մարդու իրավունքների պաշտպանության դինամիկայի որակապես նոր տարածություն, այդ թվում՝ փոքրամասնության իրավունքները երկրում, այնպես, ինչպես ցույց են տալիս նրանց սոցիալական, տնտեսական կամ այլ տեսակի աճող հնարավորությունները և կարողության իրագործումը: Ելնելով նշվածից, բնակչության տեղեկատվածությունը նոր ծագած հնարավորությունների շուրջ կրում է ծայրահեղ անհրաժեշտ և կարևոր բնույթ:

Լայն հասարակությանը քաջ հայտնի է, որ 2013 թվականի նոյեմբերի 29-ին Վիլնյուսում «Արևելյան գործընկերություն» գագաթաժողովի պաշտոնական արարողությանը Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման փաստաթղթերի նախաստորագրումը կատարեցին Վրաստանի Արտաքին գործերի նախարար տիկին Մայա Փանջիկիձեն և Եվրամիության ներքին քաղաքականության և անվտանգության հարցերով գերագույն նախագահ տիկին Կեթրին Էշտոնը: Ինչ վերաբերում է ազատ խոր և լայնածավալ ազատ առևտրային գոտու փաստաթղթերին, այն ստորագրեցին Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարար պարոն Գիորգի Կվիրիկաշվիլին և առևտրի հարցերով եվրոկոմիսար, պարոն Կարել դէ Գյուխտը:

Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիրը կփոխարինի 1996 թվականին ստորագրված Գործընկերության և համագործակցման համաձայնագրին և Վրաստանի և Եվրամիության միջև կստեղծի համագործակցման նոր իրավական շրջանակներ: Համեմատած Գործընկերության և համագործակցման համաձայնագրի հետ,Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիրը համապարփակ, քաղաքական, բովանդակությամբ ավելի մեծածավալ փաստաթուղթ է, որը համագործակցությունը Վրաստանի և Եվրամիության միջև բոլոր առաջնահերթ ուղղություններով բարձրացնում է որակապես նոր տարածություն:

Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագրի մասին բանակցությունները սկսվել էին դեռ 2010 թվականին, իսկ խոր և համապարփակ ազատ առևտրական գոտու մասին՝ 2011 թվականի դեկտեմբերին:

Բանակցությունների ընթացակարգում կայացավ 14 պլենար նիստ համաձայնագրի քաղաքական մասով, 6 ռաունդ ազատ առևտրի խորը և համապարփակ գոտու մասին, մինչև 100 տեսագիտաժողով ոլորտային համագործակցման և խորը և համապարփակ ազատ առևտրային գոտու կազմավորման մասին: Բանակցություններն ավարտվեցին 2013 թվականի հուլիսին: Ասոցացման մասին համաձայնագիրն իր մեջ ներառում է ավելի քան 1000 էջ և նախատեսում է Վրաստանի օրենսդրության մերձեցումը մոտ ԵՄ 300 իրավական ակտերին:

2. Ընդհանուր քաղաքական համատեքստ «Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագրի» մասին

«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիրը» պաշտոնապես կրում է հետևյալ անվանումը՝«Ասոցացման համաձայնագիր մի կողմից ատոմային էներգիայի միավորում ԵՄ և Եվրոպայի և նրա անդամ պետությունների միջև և, մյուս կողմից՝ Վրաստանի»:

Քանի որ «Ասոցիացիայի մասին համաձայնագիրը» ներառում է ոչ միայն այն ոլորտները, որոնցում ԵՄ ունի բացառիկ իրավասություն, նաև այն ոլորտները, որոնցում ԵՄ իրավասությունները բաժանում է անդամ պետությունների հետ, համապատասխանաբար համաձայնագրի կողմեր Եվրամիության հետ հանդիսանում են և նրա անդամ-պետությունները. Բելգիական թագավորությունը, Բուլղարիայի հանրապետությունը, Չեխական հանրապետությունը, Դանիայի թագավորությունը, Գերմանիայի ֆեդերատիվ հանրապետությունը, Էստոնիայի հանրապետությունը, Իռլանդիան, Հունաստանի հանրապետությունը, Իսպանական թագավորությունը, Ֆրանսիայի հանրապետությունը, Խորվաթիան, Իտալիայի հանրապետությունը, Կիպրի հանրապետությունը, Լատվիայի հանրապետությունը, Լիտվայի հանրապետությունը, Լյուքսենբուրգի Մեծ պետությունը, Վենգրիան, Մալթայի հանրապետությունը, Նիդեռլանդների թագավորությունը, Ավստրիայի հանրապետությունը, Լեհաստանի հանրապետությունը, Պորտուգալիայի հանրապետությունը, Ռումինիան, Սլովենիայի հանրապետությունը, Սլովակիայի հանրապետությունը, Ֆինլանդիայի հանրապետությունը, Շվեցիայի թագավորությունը, Վելիկոբրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի: միավորյալ թագավորությունը:

Ինչ վերաբերվում է Եվրոպայի ատոմային էներգիայի միավորմանը (Եվրատոմ), չնայած այն բանին, որ 1993 թվականին (Մաաստրիխտսյան պայմանագրով) և 2009 թվականին (Լիսաբոնյան պայմանագրով) տեղի ունեցավ նախնական եվրոպական միավորումների միաձուլում (քարածուխի և մետաղի և Եվրոպայի տնտեսական միավորման), իսկ հետո կազմավորում մեկ իրավական սուբյեկտի մեջ (Եվրամիություն), Եվրոպայի ատոմային էներգիայի միավորումը պահպանեց անկախ իրավական կարգավիճակը: Քանի որ «Ասոցիացիայի մասին համաձայնագիրը» իր մեջ է ներառում նաև հարցեր, որոնք մտնում

են ատոմային էներգիայի միավորման իրավասության մեջ, Եվրատոմը հանդիսանում է համաձայնագրի կողմ-մասնակիցը:

Էական է համարվում այն պարագան, որ «Ասոցացման համաձայնագիրը» ձևակերպվում է ԵՄ և այն երկրների միջև, որոնք Եվրամիության անդամ չեն համարվում և նրա նպատակն է կողմերի միջև ստեղծել համագործակցման շրջանակներ: «Ասոցացման համաձայնագիրը» պարտադիր իրավական ասպեկտում է: «Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիրը» հավակնոտ և նորարարական համաձայնագիր է, որքանով որ, ի տարբերություն նախկինում ձևակերպված նմանատիպ համաձայնագրերի, իր մեջ է ներառում ազատ առևտրի խոր և համապարփակ գոտի և ապահովում է Եվրամիությանը մերձենալու կարևոր կոնկրետ մեխանիզմները:

«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիրը» ԵՄ-ի հետ, ներառյալ ազատ առևտրի խոր և համապարփակ գոտու ձևակերպման հեռանկարը Վրաստանի համար բացվեց «Արևելյան գործընկերության» նախաձեռնությամբ: «Արևելյան գործընկերությունը», որպես Եվրամիության արևելյան եվրոպական հարևան-երկրների հետ (Ադրբեջան, Բելառուս, Մոլդովա, Վրաստան, Հայաստան, Ուկրաինա) ձևաչափ, համարվում է Շվեցիայի և Լեհաստանի նախաձեռնությունը: Նրա հիմնական նպատակը եվրոպական գործընկերներին օգնելն է եվրոպական հարևանության քաղաքականության իրականացման գործում և նրա արևելյան հարթության ամրապնդումը: «Արևելյան գործընկերությունը» իր գործունեությունը սկսել է 2009 թվականից:

Նշանակալից է այն հանգամանքը, որ նշված նախաձեռնությունը գործընկեր երկրների ԵՄ հետ մերձեցման նպատակով, ապահովում է կոնկրետ մեխանիզմներ և բացում է նոր հնարավորություններ: «Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիրը» կփոխարինի 1996 թվականին ստորագրված «Գործընկերության և համագործակցման համաձայնագրին և Վրաստանի և ԵՄ միջև կստեղծի նոր իրավական համագործակցման դաշտ: Համեմատած «Գործընկերության և համագործակցման համաձայնագրի» հետ, «Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիրը» ապահովում է Վրաստանի և ԵՄ միջև գործընկերության ավելի խորացում համագործակցման բոլոր առաջնահերթ ուղղություններով:

Ինչպես հայտնի է, Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագրի մասին բանակցությունները սկսվել էին 2010 թվականի հուլիսին, իսկ խոր և համապարփակ ազատ առևտրական գոտու մասին՝ 2011 թվականի դեկտեմբերին:
Բանակցությունների գործընթացում կայացավ 15 պլենար նիստ համաձայնագրի քաղաքական մասով, 6 ռաունդ խորը և համապարփակ ազատ առևտրային գոտու և մինչև 100 տեսա - գիտաժողով ոլորտային համագործակցման և խորը և համապարփակ ազատ առևտրային գոտու կազմավորման մասին: Բանակցություններն ավարտվեցին 2013 թվականին::

Բանակցությունների գործընթացում ընդգրկված էին Վրաստանի բոլոր համապատասխան նախարարությունները և կառավարության գերատեսչությունները: Համաձայնագրի նախաստորագրումը (առանձին և համաձայնեցված տեքստի հաստատումը կողմերի պատվիրակության ղեկավարների կողմից համաձայնագրի էջին ազգանվան սկզբնատառերի նշմամբ), կայացավ 2013 թվականի նոյեմբերի 29-ին «Արևելյան գործընկերություն» Վիլնյուսյան գագաթաժողովի շրջանակներում:

3. «Վրաստանի և Եվրամիության միջև ասոցիացման համաձայնագրի» նպատակները

«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիրն» իր առջև դնում է հետևյալ նպատակները.

- Օգնել կողմերի միջև քաղաքական ասոցացմանը և տնտեսական ինտեգրմանը, որը հիմնված կլինի ընդհանուր արժեքների և սերտ կապերի վրա, այդ թվում՝ Եվրամիության քաղաքականության, ծրագրերի և գերատեսչությունների մեջ Վրաստանի մասնակցության աճի ճանապարհով

- Ապահովել կայուն և ամուր շրջանակներ ընդհանուր հետաքրքրությունների բոլոր ոլորտներում խորացված քաղաքական երկխոսության համար, ինչը կողմերին սերտ քաղաքական հարաբերությունների զարգացման հնարավորություն կտա

- Օժանդակել Վրաստանում ժողովրդավարության ուժեղացմանը և քաղաքական, տնտեսական և ինստիտուցիոնալ կայունությանը

- Օժանդակել, պաշտպանել և ուժեղացնել խաղաղությունը և կայունությունը տարածաշրջանային և միջազգային մակարդակներով՝ հենվելով Ազգերի Միացյալ Կազմակերպությունների օրենսգրքի և Եվրոպայում անվտանգության և համագործակցման, այդ թվում՝ լարվածության օջախների վերացման, սահմանի անվտանգության ուժեղացման, ինչպես նաև մերձսահմանային համագործակցման և բարիդրացիական հարաբերությունների խրախուսումը ջանքերի միավորման ճանապարհով գիտաժողովի 1975 թվականի Հելսինկյան եզրափակիչ ակտի սկզբունքների վրա

- Օժանդակել համագործակցմանը, որն իր առջև նպատակ է դնում հակամարտությունները լուծել խաղաղ ճանապարհով

- Ուժեղացնել համագործակցումը ազատության, անվտանգության և արդարադատության ոլորտում, որի նպատակն է օրենքի գերակայության և մարդու իրավուքի և հիմնական ազատությունների հարգանքը

- Օժանդակել Վրաստանում ժողովրդավարության ուժեղացմանը և քաղաքական, տնտեսական, ինստիտուցիոնալ կայունությանը

- Պաշտպանել Վրաստանի ջանքերը՝ զարգացնել նրա տնտեսական ներուժը միջազգային համագործակցման միջոցով, այդ թվում՝ նրա օրենսդրությունը ԵՄ օրենսդրությանը մեձեցնելու ճանապարհով.

- Հասնել Վրաստանի աստիճանական տնտեսական ինտեգրմանը ԵՄ ներքին շուկային, ինչպես նախատեսված է տվյալ պայմանագրով, հատկապես ազատ առևտրի խոր և համապարփակ գոտի ստեղծելու ճանապարհով, ինչը ապահովում է Վրաստանին հիմնավոր մուտք ԵՄ ներքին շուկա, կայուն և համապարփակ կարգավորված մերձեցման հիման վրա՝ պահպանելով համաշխարհային առևտրական կազմակերպությունների իրավունքներն ու պարտավորությունները

- Ավելի սերտ համագործակցման համար այլ ոլորտներում ընդհանուր շահերի պայմաններ ստեղծել.

4. «Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիրը» ստորագրող կողմերի ստանձնած պարտավորությունները

Ստորագրող կողմերը իրենց վրա են վերցնում հետևյալ պարտավորությունները.

- Այսուհետ ուժեղացնել մարդու իրավունքների և հիմնական ազատության հարգանքը՝ հիմնված կողմերի ընդհանուր արժեքների, այդ թվում՝ այն անձանց իրավունքների, որոնք պատկանում են փոքրամասնություններին, ժողովրդավարական սկզբունքներին, օրենքի գերակայությանը և լավ կառավարմանը.

- Օժանդակել Վրաստանում ռեֆորմների իրականացմանը և այդ նպատակով օգտագործել բոլոր հնարավոր համագործակցման մեխանիզմները նաև տեխնիկական, ֆինանսական և տնտեսական օգնություն ցուցաբերել.

- Բոլոր սկզբունքների և դրույթների հարցով, որոնք նախատեսված են Ազգերի Միացյալ կազմակերպությունների օրենսգրքով, Եվրոպայում Անվտանգության և Համագործակցման Կազմակերպության (ԵԱՀԿ), հատկապես Եվրոպայում անվտանգության և համագործակցման 1975 թվականի Հելսինկյան գիտաժողովի եզրափակիչ ակտով և, համապատասխանաբար, Մադրիդյան, Ստամբուլյան և 1991 թվականի Վենայի գիտաժողովի եզրափակիչ փաստաթղթերով և 1990 թվականի Փարիզյան Խարտիայի նոր Եվրոպայի համար, նաև 1948 թվականի ՄԱԿ-ի մարդու իրավունքների համընդհանուր դեկլարացիայով և մարդու իրավունքների պաշտպանության . հիմնական ազատությունների եվրոպական կոնվենցիայով:

- Հարգել կայուն զարգացման սկզբունքները, պաշտպանել շրջակա միջավայրը և թեթևացնել կլիմայի փոփոխման գործընթացը, մշտապես բարելավել պաշտպանիչ կառավարումը և շրջակա միջավայրի կարիքների գնահատումը՝ ներառելով մերձսահմանային համագործակցման պայմանագրերի և բազմակողմանի միջազգային պայմանագրերի իրականացումը.

- Ուժեղացնել էներգառեսուրսի մատակարարման անվտանգությունը, այդ թվում «Հարավային միջանցքի»

զարգացման միջնորդությամբ, Վրաստանում համապատասխան նախագծերի խրախուսման ճանապարհով, ինչը կօժանդակի համարժեք ենթակառույցի ձևավորմանը, այդ թվում՝ Վրաստանով տարանցման համար, շուկայի ինտեգրման աճին և աստիճանական կարգավորված մերձեցմանը ԵՄ օրենսդրության էլեմենտներին, ինչպես նաև օժանդակել էներգոարդյունավետության աճին և նորացված էներգոռեսուրսների օգտագործմանը:

- Պահպանել այն միջազգային պարտականությունները, որոնք վերաբերվում են զենքի մասայական վերացմանը և նրանց մատակարարումը չտարածելուն, ինչպես նաև համագործակցել զինաթափման հարցերով.

- Վրաստանի բոլոր քաղաքացիների վրա, նաև հակամարտության հետևանքով մասնատված հասարակության վրա պետք է տարածվի սերտ քաղաքական ասոցացումից և տնտեսական ինտեգրումից ստացված օգուտը

- Պայքարել կազմակերպված հանցագործության և անօրինական առևտրի (թրեֆիքինգի) դեմ և ավելի ուժեղացնել համագործակցումը ահաբեկչության դեմ պայքարի ոլորտում.

- Խորացնել երկխոսությունը և համագործակցումը շարժականության, վերաբնակեցման և սահմանի կառավարման, ինչպես նաև հաշվի առնելով «Համագործակցում հանուն շարժականության» ԵՄ և Վրաստանի միջև, կիրառելով համապարփակ մոտեցում, ուշադրությունը սևեռել օրինական գաղթի վրա, այդ թվում՝ շրջանաձև վերաբնակեցմանը և համագործակցմանը՝ ուղղված մարդկային առևտրի (թրեֆիքինգի) և ռեադմիսիայի դեմ պայքարի մասին համաձայնագրի արդյունավետ իրագործմանը

- Ազատ շուկայական էկոնոմիկայի սկզբունքների պաշտպանության տեսանկյունից և ԵՄ պատրաստակամությունից՝ նպաստել Վրաստանում տնտեսական ռեֆորմների իրականացմանը, այդ թվում՝ «Հարևանության Եվրոպական քաղաքականության» և «Արևելյան գործընկերության» շրջանակներում

- Հասնել տնտեսական ինտեգրման հատկապես ազատ առևտրի խոր և համապարփակ գոտու, որպես համաձայնագրի

անբաժան մասի միջոցով, ներառյալ կարգավորված մերձեցումը և համապատասխան համաշխարհային առևտրի կազմակերպության անդամության հետևանքով առաջացած իրավունքները և պարտականությունները

- Ուժեղացնել միջանձնական շփումները, այդ թվում՝ համագործակցման և գիտական ու տեխնոլոգիական ոլորտներում, բիզնեսի, երիտասարդության, կրթության և մշակույթի ոլորտում.

- Օժանդակել մերձսահմանային և միջտարածաշրջանային համագործակցմանը երկու կողմերի բարիդրացիական հարաբերությունների ոգով

- Ներդրում մտցնել Վրաստանի քաղաքական, սոցիալ-տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման գործնթացում, ընդհանուր հետաքրքրությունների ոլորտների լայն սպեկտրում, բազմաթիվ ուղղություններում համագործակցման ճանապարհով, այնպիսիք, ինչպիսիք են քաղաքացիական հասարակության զարգացում, լավ կառավարում, այդ թվում՝ հարկային ոլորտում, առևտրային ինտեգրում և ուժեղացված տնտեսական համագործակցում, ինստիտուցիոնալ զարգացում, հանրային կառավարման բարեփոխումներ և հանրային ծառայություն և պայքար կոռուպցիայի դեմ, աղքատության նվազում և համագործակցում ազատության, անվտանգության և արդարադատության ոլորտում, ինչն անհրաժեշտ է տվյալ համաձայնագրի արդյունավետ իրականացման համար և, նշելով Եվրամիության պատրաստակամությունը՝ նպաստել համապատասխան ռեֆորմների իրականացմանը.

- Պաշտպանել այն ընդհանուր արժեքները, ինչի վրա հիմնված է ԵՄ (ժողովրդավարություն, մարդու իրավունքների և հիմնական ազատություն, օրենքի գերակայություն), որոնք նաև հանդիսանում են քաղաքական ասոցացման և տնտեսական ինտեգրման կպչուն կետը, ինչը նախատեսված է «Վրաստանի և Եվրամիության միջև Ասոցիացիայի համաձայնագրով».
- Նպաստել միջազգային խաղաղությանը և անվտանգությանը, ինչպես նաև կցվել արդյունավետ իրականացմանը բազմակողմանի համագործակցման և վեճերի խաղաղ կարգավորման, մասնավորապես այդ նպատակով համագործակցման ճանապարհով, Միացյալ Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ) և Անվտանգության և

համագործակցման Կազմակերպությունների (ԵԱՀԿ) շրջանակներում.

- Էլ ավելի զարգացնել կանոնավոր քաղաքական երկխոսությունը երկկողմանի և միջազգային հարցերով ընդհանուր հետաքրքրությունների ոլորտում, ներառյալ տարածաշրջանային ասպեկտները, հաշվի առնելով ԵՄ ընդհանուր ներքին քաղաքականությունը և անվտանգության քաղաքականությունը, այդ թվում՝ անվտանգության ընդհանուր քաղաքականությունը և պաշտպանության քաղաքականությունը.

- Կատարել Էներգոխարտիայի պայմանագիրը, ընդունելով համագործակցության ուժեղացումը էներգետիկայի ոլորտում և կողմերի պարտականությունները.

- Բարելավել հանրային առողջության և մարդու առողջության պաշտպանության մակարդակը, որպես կայուն զարգացման և տնտեսական աճի էական բաղադրիչ.

Ի հավելումն վերը նշվածի, նշանակալից է և այն, որ «Վրաստանի և Եվրամիության միջև ասոցիացիայի համաձայնագիրը» ստորագրող կողմերը դրական են գնահատում կողմերի սերտ կապը և ընդհանուր արժեքները, որոնք անցյալում հաստատված էին մի կողմից՝ Եվրոպական ընկերակցության և նրա անդամ-պետությունների միջև և, մյուս կողմից, Վրաստանի, «Գործընկերության և համագործակցման» համաձայնագրով, և այժմ զարգանում են «Արևելյան գործընկերության» շրջանակներում, որպես «Հարևանության Եվրոպական քաղաքականության» հատուկ ուղղություն: Կողմերը նաև ընդունում են ընդհանուր ցանկությունը՝ հետագայում զարգացնել, ուժեղացնել և խորացնել հարաբերությունները հավակնոտ և նորարարական ճանապարհով:

«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցիացման համաձայնագիրը» Վրաստանին պարտավորեցնում է առաջնորդվել պայմանագրով սահմանված դրույթներով և արժեքներով և նպաստել դրանց իրականացմանը: Համաձայնագիրը չի սահմանափակում և բաց է թողնում ԵՄ և Վրաստանի միջև հարաբերությունների հետագա առաջընթաց զարգացման ճանապարհը: Համաձայնագրի տակ ստորագրությամբ, Վրաստանը պարտավորվում է համապատասխան ոլորտներում ապահովել Վրաստանի օրենսդրության մերձեցումը ԵՄ օրենսդրության հետ և նրա

արդյունավետ իրականացումը: Ավելին, Վրաստանը պարտավոր է զարգացնել իր վարչական և ինստիտուցիոնալ ենթակառույցն այնքան, որքան դա անհրաժեշտ է «Վրաստանի և Եվրամիության միջև ասոցիացման համաձայնագրի» իրականացման համար:

Համաձայնագրի մասնակից կողմերը գիտակցում են, որ ներքին պետական ռեֆորմներն՝ ուղղված ժողովրդավարությանը և շուկայական էկոնոմիկային, կնպաստեն Վրաստանին՝ մասնակցելու ԵՄ քաղաքականությանը, ծրագրերում և գործակալություններում: Այդ գործընթացը և կոնֆլիկտի կայուն կարգավորումը կամրապնդի մեկը մյուսին և կնպաստի վստահության վերականգնմանը հակամարտության հետևանքով մասնատված հասարակության միջև:

Ավելին, կողմերն արտահայտում են լիարժեք հարգանք անկախության, ինքնիշխանության, տերիտորիալ ամբողջականության և միջազգայնորեն ճանաչված սահմանների անխախտելիության սկզբունքների, միջազգային իրավունքի Միացյալ Ազգերի Կազմակերպության կանոնադրության նկատմամբ՝ համաձայն Եվրոպայում անվտանգության և համագործակցման 1975 թվականի Հելսինկյան եզրափակիչ ակտի համաժողովի և Միացյալ Ազգերի Կազմակերպության Անվտանգության խորհրդի բանաձևերի:

Հատկանշական է այն հանգամանքը, որ Համաձայնագիրը ստորագրող կողմերը դրական են գնահատում Վրաստանի ստանձնած միջազգային պարտականությունները, ինչպես նաև վրաց իշխանությունների վարած ներքին պետական քաղաքականությունը: Այդ տեսակետից զգալի են ընդհանուր գնահատականները կողմերի երկրի ներքին և արտաքին քաղաքականության որոշակի ոլորտների նկատմամբ: Համաձայնագիրը ստորագրող կողմերը ռասնավորապես ընդունում են.

- Հաշտության իմաստով Վրաստանի վերցրած պարտականությունների նշանակությունը և Վրաստանի ջանքերը՝ վերականգնել տարածքային ամբողջականությունը և Վրաստանի լիարժեք արդյունավետ հսկումը Աբխազիայի և Ցխինվալիի Հարավ/Օսեթական տարածաշրջանները հակամարտության խաղաղ կարգավորման նպատակով, միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա և ԵՄ ստանձնած պարտականությունների նշանակությունը հակամարտությունների խաղաղ և վերջնականորեն

կարգավորելու պարտականությունների աջակցման վերաբերյալ

- 2008 թվականի օգոստոսի 12-ին ընդունած վեց կետից բաղկացած համաձայնագիրն իրականացնելու և հետագա իրականացման միջոցները պահպանելու և անվտանգությունն ապահովելու նպատակով, համապատասխան տեղում եղած արդյունավետ միջազգային մեխանիզմների, փոխադարձաբար խթանող ճանաչման և ներառման քաղաքականության վարմամբ, Ժնևյան միջազգային բանակցությունների և միջազգային իրավունքի սկզբունքների խթանմամբ ստիպողաբար տեղահանված անձանց և փախստականների անվտանգ և արժանավայել վերադարձի նշանակությունը

- Վրաստանի քաղաքացիների համար, համապատասխան փուլում առանց մուտքի արտոնագրի ռեժիմ մտցնելու նշանակությունը լավ կառավարվող և անվտանգ շարժականության պայմաններում, ներառյալ համաձայնագրի արդյունավետ իրականացումը արտոնագիր ստանալու գործընթացի դյուրացման և ռեադմիսիայի մասին:

Հաշվի առնելով վերոհիշյալը, պետք է նաև ավելացնել այն պարագան, որ «Վրաստանի և Եվրամիության միջև ասոցիացման համաձայնագիրը» կողմերի միջև կստեղծի տնտեսական հարաբերությունների նոր իրավիճակ և, առաջին հերթին, առևտրի և ներդրումների համար և կխրախուսի մրցակցությունը, ինչը համարվում է կարևոր գործոն տնտեսական վերակազմավորման և արդիականացման համար.

5 «Վրաստանի և Եվրամիության միջև ասոցիացման համաձայնագրի» էությունը

«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցիացման համաձայնագիրը» պայմանականորեն կարելի է բաժանել երեք մասի.

- Քաղաքական համագործակցում (պրիամբուլա (ներածական) I-III; VIII)
- Ոլորտային համագործակցում (մաս V-VII)
- Ազատ առևտրի խոր և համապարփակ գոտի (բաժին IV)

«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիրը» իր մեջ ներառում է ավելի քան 1000 էջ և նախատեսում է Վրաստանի օրենսգրքի մերձեցումը մոտ 300 իրավական ակտերով:

«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիրը» ունի հետևյալ կառուցվածքը.

Պրեամբուլա

1. *Բաժին I. Ընդհանուր սկզբունքներ*

2. *Բաժին II. Քաղաքական երկխոսություն և ռեֆորմ. Համագործակցում արտաքին քաղաքականության և անվտանգության քաղաքականության ոլորտում*

3. *Բաժին III. Արդարադատություն, ազատություն և անվտանգություն*

4. *Բաժին IV. Առևտուր և առևտրի հետ կապված հարցեր*

- Գլուխ 1. Ազգային ռեժիմ և ապրանքի մուտք դեպի շուկա
- Գլուխ 2. Առևտրային միջոցներ
- Գլուխ3.Տեխնիկական արգելքներ առևտրում, միօրինակություն, չափագիտություն, հավատարմագրություն և համապատասխանության գնահատում
- Գլուխ 4.Սանիտարական և բուսասանիտարական միջոցներ
- Գլուխ 5. Մաքսային օժանդակություն և օժանդակություն առևտրում
- Գլուխ 6. Հիմնարկ, առևտուր ծառայությամբ և էլեկտրոնային կոմերցիա

- Գլուխ 7. Ընթացիկ վճարումներ և կապիտալի շարժում
- Գլուխ 8. Հանրային գնումներ
- Գլուխ 9. Մտավոր սեփականություն
- Գլուխ 10. Մրցակցություն
- Գլուխ 11.Իրավիճակ՝ կապված առևտրի հետ էներգետիկայի ոլորտում
- Գլուխ 12.Թափանցիկություն
- Գլուխ 13.Առևտուր և կայուն զարգացում
- Գլուխ 14. Վեճերի կարգավորում
- Գլուխ 15. Մերձեցման ընդհանուր դրույթներ IV բաժնին համապատասխան

5. Բաժին V. Տնտեսական համագործակցում

- Գլուխ 1. Տնտեսական երկխոսություն
- Գլուխ2. Հանրային ֆինանսների կառավարում և ֆինանսական վերահսկողություն
- Գլուխ 3. Հարկեր
- Գլուխ 4. Վիճակագրություն

6. Բաժին VI. Համագործակցման այլ ոլորտներ

- Գլուխ 1.Տրանսպորտ
- Գլուխ 2. Համագործակցում էներգետիկայի ոլորտում
- Գլուխ 3. Շրջակա միջավայրի պաշտպանություն
- Գլուխ 4. Կլիմայի հետ կապված գործողություններ
- Գլուխ 5. Արդյունաբերական քաղաքականություն և ձեռնարկությունների և հանքարդյունաբերական քաղաքականություն
- Գլուխ 6. Կորպորատիվ իրավունք, հաշվառում և հաշվեստուգում և կորպորատիվ կառավարում
- Գլուխ 7. Ֆինանսական ծառայություն
- Գլուխ 8. Համագործակցում տեղեկատվական հասարակության ոլորտում
- Գլուխ 9. Զբոսաշրջություն
- Գլուխ 10. Գյուղատնտեսություն և գյուղատնտեսական զարգացում
- Գլուխ 11. Ձկնորսություն և ծովային կառավարում
- Գլուխ12. Համագործակցում հետազոտության, զարգացման և տեխնոլոգիայի ցուցադրման ոլորտում
- Գլուխ 13.Օգտատերերի քաղաքականություն
- Գլուխ 14. Աշխատանքի տեղավորում, սոցիալական քաղաքականություն և նույնանման հնարավորություններ
- Գլուխ 15.Հասարակական առողջություն
- Գլուխ 16. Կրթություն, վարժանքներր, երիտասարդություն
- Գլուխ 17. Համագործակցում մշակույթի ոլորտում

- Գլուխ 18. Համագործակցում տեսալսողական և ԶԼՄ ոլորտներում
- Գլուխ 19. Համագործակցում սպորտի և ֆիզիկական ակտիվության ոլորտում
- Գլուխ 20.Համագործակցում քաղաքացիական հասարակության ոլորտում
- Գլուխ 21. Տարածաշրջանային զարգացում, համագործակցում մերձսահմանային և տարածաշրջանային մակարդակով
- Глава 22.Քաղաքացիական պաշտպանություն
- Глава23.Մասնակցություն գործակալություններում և ԵՄ ծրագրերում

7. ***Բաժին VII. Ֆինանսական օգնություն և դրույթներ խարդախության դեմ պայքարի և վերահսկողության մասին***

8. ***Բաժին VIII. Ինստիտուցիոնալ, ընդհանուր և եզրափակիչ դրույթներ***

Բացի նշվածից, «Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագրում» միավորված են.

34 դրույթ, որոնք ներառում են իրենց մեջ ԵՄ համապարասխան իրավական ակտերի ցանկ, որոնցով Վրաստանը պետք է մերձենա կոնկրետ ժամանակներում;

4 արձանագրություն.

- «Ապրանքի ծագում» հասկացության բնորոշումը և վարչական համագործակցության մեթոդները;
- Վարչական փոխօգնություն մաքսային հարցերով
- ԵՄ ֆինանսական օգնության համատեքստում խարդախության և վերահսկման դեմ պայքարի դրույթներում օգտագործված տերմինների սահմանման մասին
- ԵՄ և Վրաստանի միջև շրջանակային (գլխավոր) պայմանագրի մասին Վրաստանի ԵՄ ծրագրերում մասնակցելու հիմնական սկզբունքների հարցերուվ

«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցիացման համաձայնագրի» ընդհանուր վերլուծությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ նրա իրականացումը հնարավոր

կդարձնի կողմերի միջև համագործակցման խորացումը հետևյալ ոլորտներում.

- Ընդհանուր եվրոպական արժեքների ամրապնդում և պաշտպանում, ժողովրդավարության և օրենքի գերակայության, լավ կառավարման, իրավունքի և հիմնական ազատության հավատարմություն և տարածում, հարգանք միջազգային իրավունքի սկզբունքների նկատմամբ, այդ թվում՝ անկախություն և տարածքային ամբողջություն միջազգային ճանաչման սարմաններում, օգնություն հակամարտությունները խաղաղ ճանապարհով կարգավորելու հարցում:

- Արտաքին քաղաքականություն և անվտանգության քաղաքականություն: Քաղաքական երկխոսության և համագործակցման խորացում համապատասխան ոլորտներում, այդ թվում՝ ներքին պետական ռեֆորմ, միջազգային մասսայական ոչնչացման զենքի չտարածում, տարաշրջանային կայունություն և այլն

- Արդարադատություն, ազատություն և անվտանգություն, այդ թվում՝ համագործակցման խորացում; սահմանի կառավարման, փողի լվացման, ահաբեկչության, թմրանյութերի անօրեն վաճառքի, կազմակերպված հանցագործության և մարդկանցով թրեֆիքինգի դեմ պայքարի, անձնական տվյալների պաշտպանում և այլն.

- Բոլոր ոլորտների ճյուղային քաղաքականության արդիականացում և եվրոպական չափանիշների ներդնում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են օրինակ. տրանսպորտը, էներգետիկան, շրջակա միջավայրի պաշտպանությունը, գյուղատնտեսությունը, զբոսաշրջիկությունը, հետազոտությունը և տեխնոլոգիաները, զբաղվածությունը և սոցիալական քաղաքականությունը, առողջապահությունը, կրթությունը, մշակույթը, քաղաքացիական հասարակությունը, տարածաշրջանային զարգացումը և այլն:

- Առևտուր և առևտրի հետ կապված հարցեր, որոնք նախատեսում են Վրաստանի և Եվրամիության միջև ազատ առևտրի խոր և համապարփակ գոտու ստեղծում: «Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագրում» առևտրի հետ կապված հարցերի իրականացումը Վրաստանի համար ստեղծում է, իրական մեխանիզմ՝ ինտեգրվելու ԵՄ ներքին շուկա:

6. Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտի

Ի տարբերություն ազատ առևտրի համաձայնության, խոր և համապարփակ ազատ առևտրի գոտին ի նկատի ունի ինչպես սակագնային, այնպես էլ ոչ սակագնային արգելքները և կարգավորում է առևտրի հետ կապված հարցերի լայն սպեկտրը: Նման սպեկտրին են վերաբերվում այնպիսի ճյուղերը, ինչպիսիք են օրինակ մթերքի անվտանգությունը, արտադրանքի անվտանգությունը, մրցակցության քաղաքականությունը, մտավոր սեփականության պաշտպանությունը, մաքսային հարցերը, պետական գնումները և այլ պետական կարևոր ակտուալ ոլորտներ:

Ի տարբերություն առևտրի մասին այլ համաձայնագրերի, խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու ի նկատի ունի աստիճանական մերձեցում կարգավորող օրենսդրությանը և առևտրի ցանցի ինստիտուտներին համապատասխան կարգավորմանը և ԵՄ վարչարարական մեխանիզմներին, ինչը երկարաժամկետ հեռանկարում հնարավոր կդարձնի Վրաստանի օրենսդրական բազայի ներդաշնակ զարգացումը և նրա հաջող հարմարեցումը Եվրոպական լավագույն փորձին:

7. Ընդհանուր պետական օգուտ՝ ստացված խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու կազմավորման հետևանքով

Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու կազմավորումը Վրաստանի և Եվրամիության միջև կնպաստի.

- ԵՄ պահանջներին համատեղելի առևտրային համակարգի ստեղծմանը
- Թափանցիկ և կայուն գործարար - միջավայրի ձևավորմանը
- Վրաստանի ներդրումների ներգրավմանը և, համապատասխանաբար, արտասահմանյան ներդրումների աճին
- Երկրի կայուն զարգացմանը և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը
- Նոր ձեռնարկությունների և արտահանվող արտադրանքի ստեղծմանը
- Տեղական արտադրանքի մասշտաբային աճի ֆոնի վրա նոր աշխատատեղերի ստեղծմանը
- Վրացական արտադրանքի արտահանման շուկաների դիվերսիֆիկացմանը և ընդլայնմանը
- Վրացական արտահանման համար արտահանման հետ կապված ծախսերի նվազեցմանը
- Վրաց օգտատիրոջ համար անվտանգ և անվնաս մթերքի մատակարարմանը
- Մտավոր սեփականության իրավունքի պաշպանմանը
- Եվրոպական լավագույն փորձին համապատասխան պետական վարչարարական մարմինների զարգացմանը
- Ամբողջությամբ վերցրած տնտեսական աճի խթանմանը և երկրի տնտեսական զարգացմանը:

8. Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու կազմավորումից ծագած պետական պարտավորություններ և դրանց իրականացման հետևանքները

Պետք է ընդգծել այն հանգամանքը, որ ի լրումն համապետական հարցի, որը տալիս է ազատ առևտրի խոր և համապարփակ գոտու կազմավորումը, նա նաև կանխատեսում է Վրաստանի պետության կողմից մի շարք պարտավորությունների իրականացումը:

Մասնավորապես, ազատ առևտրի խոր և համապարփակ գոտու կազմավորումը նախատեսում է աստիճանական մերձեցում Վրաստանի օրենսդրությանը՝ առևտրի հետ կապված ԵՄ օրենսդրության հետևյալ ոլորտներում.

- Սանիտարային և բուսասանիտարային միջոցներ
- Տեխնիկական արգելքներ առևտրում
- Պետական գնումներ
- Մաքսային առևտուր և առևտուր ծառայությամբ, մասնավորապես էլեկտրոնային հաղորդակցություն, ֆինանսական ծառայություն, տրանսպորտ, փոստ և ցրիչ:

Նշված ոլորտների հետ մերձեցման արդյունքում (մասնավորապես սանիտարային և բուսասանիտարային միջոցներ և տեխնիկական արքելքներ առևտրում), Վրաստանում կստեղծվեն մթերքների անվնասակարության համակարգեր և եվրոպական մակարդակի ազգային ենթակառուցվածքի համակարգեր, ինչը կօժանդակի Վրաստանի գյուղատնտեսական և ինդուստրիալ արտադրանքի ազատ տեղադրմանը ԵՄ շուկայում, ինչպես նաև տեղական շուկայում անվնաս և անվտանգ արտադրանքի տեղավորմանը:

Նշանակալից է և այն հանգամանքը, որ բանակցությունների ընթացքում վրացական կողմը հասավ աննախադեպ համաձայնության ԵՄ-ի հետ սակագնային ազատականացման հարցում: Համաձայնությունը ուժի մեջ մտնելուց հետո վրացական ծագում ունեցող բոլոր մթերքները (բացի սխտորից, որի վրա կտարածվի քանակային սահմանափակում) ազատված կլինեն մաքսային սակագնից ԵՄ արտաքին շուկա արտահանելիս:

Պետական գնումների ոլորտում օրենսդրությանը մերձենալը կապահովի Վրաստանի պետական գնումների մաքսիմալ

թափանցիկությունը և դրա հետ միասին կստանա թույլտվություն՝ Վրաստանում արտադրվող ծառայության ապրանքը ԵՄ անդամ երկրների պետական գնումների շուկա մտցնելու համար:

Մաքսային ոլորտում օրենսդրությանը մերձենալու դեպքում Վրաստանի մաքսային կանոնակարգերը կմոտենան Եվրամիության առաջադեմ կանոնակարգերին: Կիրականացվի սերտ համագործակցումը Վրաստանի և Եվրամիության մաքսային վարչարարության հետ, ինչը կնպաստի Վրաստանի և Եվրամիության միջև արտահանման/ներմուծման ընթացակարգի դյուրացմանը, Վրաստանի և Եվրամիության միջև իրավիճակի թափանցիկության և կանխատեսելի իրավիճակի ստեղծմանը:

Օրենսդրության մերձեցումը ծառայությամբ առևտրի ոլորտում հնարավորություն է տալիս իրականացնելու ծառայությամբ շուկաների հետագա ազատականացումը, ինչը վրացական ընկերությունների համար նախատեսում է ԵՄ համապատասխան շուկաներում մուտք ունենալու ավելի լավ պայմաններ:

Օրենսդրական մերձեցումը ազատ առևտրի խոր և համապարփակ գոտու կազմավորմամբ, ենթադրում է համապատասխան ոլորտներում եվրոպական չափանիշների և փորձի ներդնում: Հասարակական և մասնավոր ճյուղերի նշված փոփոխություններին հարմարվելու համար նախատեսված է պետության կողմից անցկացնել համապատասխան միջոցառումներ Եվրամիության աջակցությամբ, այդ թվում տեխնիկական/արտահանման, կրթական և ֆինանսական օգնություն ինստիտուցիոնալ ենթակառույցի զարգացման համար.

Սանիտարային և բուսասանիտարային համակարգի բարելավումը, մերձեցումը եվրոպական չափանիշներին կլավացնի վրացական արտադրանքի որակը և կբարձրացնի վստահությունը համաշխարհային շուկայում, ինչը կնպաստի արտահանման աճին: Բացի նշվածից, այն կպաշտպանի երկիրը վնասատուների ներխուժումից, ինչը Վրաստանին հնարավորություն կտա ապահովել անասնաբուժական վստահելիությունը և կնպաստի վրաց արտադրողներին ԵՄ շուկա արտահանել կենդանական և բուսական ծագման մթերք:

9.«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագրի» իրականացման արդյունքում ստացված ընդհանուր հասարակական օգուտ

Վրաստանի քաղաքացիները կստանան կոնկրետ օգուտ «Վրաստանի և Եվրամության միջև ասոցացման համաձայնագրի» իրականացումից: Այդ թվում, պետք է նշել.

- Տեղական գյուղատնտեսական մթերքի որակի բարելավում
- Փոքր և միջին արտադրության համար լավագույն հնարավորությունների ստեղծում
- Եվրոպական կրթության հասանելիություն
- Առողջապահության կատարելիություն
- Էներգոարդյունավետության աճ և նորացված էներգոռեսուրսների զարգացում
- Լավագույն կերպով գործող դատարան, հաստատված օրենքի գերակայություն, աճած հաշվետվության ենթակայություն և հանրային ծառայության թափանցիկություն:.

«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիրը» և Եվրամիության անդամ դառնալու հեռանկարը

«Վրաստանի և Եվրամության միջև ասոցացման համաձայնագիրը» չի նախատեսում ԵՄ անդամության մեջ մտնելը, չնայած համաձայնագիրը ԵՄ-ի և նրա օրենսդրության հետ զբաղեցնում է այնքան բարձր մակարդակ, որ նրա արդյունավետ իրականացումը, փաստորեն, երկրի եվրոպականացումը դարձնում է անդառնալի գործընթաց: «Վրաստանի և Եվրամության միջև ասոցացման համաձայնագիրը» իր առջև նպատակ է դնում քաղաքական ասոցացում և տնտեսության աստիճանական ինտեգրում:

Համաձայնագիրը տալիս է երկարաժամկետ հիմք Վրաստան-ԵՄ հետագա հարաբերությունների համար, չնայած չի բացառում հարաբերությունների հետագա զարգացումը ԵՄ համաձայնագրին համապատասխան: Հենց այստեղ կարևոր է նշել այն հանգամանքը, որ ԵՄ համաձայնագրի 49-րդ հոդվածի համաձայն, ցանկացած եվրոպական երկիր, որը հարգում է ԵՄ-ի արժեքները, կարող է դիմում ներկայացնել ԵՄ անդամությունից դուրս գալու խնդրանքով:

«Վրաստանի և Եվրամության միջև ասոցացման համաձայնագրի» ներածականում ասվում է, որ կողմերի ընդհանուր ցանկությունն է հետագայում զարգացնել, ամրապնդել և խորացնել հարաբերությունները հավակնոտ և նորարարական ճանապարհով: «Վրաստանի և Եվրամության միջև ասոցացման համաձայնագիրը» չի սահմանափակի և կթողնի բաց Վրաստանի և Եվրամիության հարաբերությունների առաջընթաց զարգացման ճանապարհը:

Համաձայնագրում ճանաչվել են Վրաստանի եվրոպական ձգտումները և եվրոպական ընտրությունը և ցույց է տված, որ այն ընդհանուր արժեքները, ինչի վրա հիմնված է Եվրամիությունը, այդ թվում՝ ժողովրդավարությունը, իրավունքի և մարդու հիմնական ազատությունների պաշտպանությունը և օրենքի գերակայությունը նույնպես հանդիսանում է քաղաքական ասոցացման և տնտեսական ինտեգրման անկյունաքարը: Նաև ասված է, որ Վրաստանը, որպես արևելաեվրոպական երկիր, պարտավոր է ղեկավարվել այդ արժեքներով և նպաստել նրանց իրագործմանը: Պայմանագրում նաև նշված է, որ Վրաստանը և ԵՄ անդամ – պետությունները ունեն պատմական կապեր և ընդհանուր արժեքներ:

«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիրը» և Եվրամիության հետ վիզային ռեժիմի ազատականացումը

Համաձայնագրի համապատասխան մասում կարևոր տեղ է զբաղեցնում մարդկանց շարժականության դյուրացումը, այդ թվում համապատասխան փուլում առանց մուտքի արտոնագրի (վիզայի) ռեժիմ մտցնելը լավ կառավարվող և ամվտանգ միջավայրում:

Չնայած, հենց այստեղ պետք է նշել և այն հանգամանքը, որ վիզային ռեժիմի ազատականացումը ԵՄ-ի հետ համագործակցման շրջանակներում անկախ գործընթաց է, որն ընթանում է Վրաստան-ԵՄ վիզային երկխոսության ձևաչափում: Առանց վիզայի ռեժիմին հասնելու գլխավոր նախապայմաններից մեկը հանդիսանում է «Վիզային ռեժիմի ազատականացման գործողության պլանի» արդյունավետ իրականացումը:

Վիզային ռեժիմի ազատականացման գործողության պլանը Վրաստանի կողմից հաջող իրականացնելուց հետո Եվրամիության կողմից Վրաստանի համար վիզային ռեժիմի

վերացումը և համապատասխան քաղաքական որոշում ընդունելու ազդեցության գնահատումը կմտնի Վրաստանի քաղաքացիների համար առանց վիզայի դուրս գալու Շենգենյան տարածքի ԵՄ անդամ-երկրներ: Վրաստանի և ԵՄ միջև առանց վիզայի ռեժիմի հեռանկարը «Արևելյան գործընկերության» գլխավոր բաղադրիչներից մեկն է, ժողովուրդների միջև հաղորդակցության ակտիվացման հիմնական գործիքը և ԵՄ հետ հետագա մերձեցման արդյունավետ միջոցը

«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիրը» և
Ճյուղային քաղաքականության հեռանկարները

«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիրը» հանդիսանում է Վրաստանի և ԵՄ մերձեցման գործողությունների պլանը, որն իր մեջ ներառում է երկրի համարյա բոլոր՝ քաղաքական, սոցիալական և տնտեսական ոլորտները: Ճյուղային քաղաքականության ոլորտում համագործակցման նպատակը հանդիսանում է Վրաստանի աստիճանական մերձեցումը ԵՄ չափանիշներին:

Որոշ գլուխներում համաձայնագրերը դրույթներ են, որոնցում մանրամասնորեն գրված են օրենսդրական փոփոխությունների և ինստիտուցիոնալ ռեֆորմների փոփոխությունները կոնկրետ ոլորտում:

Համաձայնագիրը նախատեսում է Եվրամիության կողմից համագործակցման խորացում յուրաքանչյուր ոլորտում, փորձի փոխանակում և համապատասխան ռեֆորմների աջակցում:

«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագրի» ձևակերպումը կնպաստի.

- Հարկային ոլորտում արդյունավետ կառավարման ամրապնդմանը, առևտրի զարգացման նպատակով տնտեսական հարաբերությունների խորացմանը և լրացուցիչ ներդրումների ներգրավմանը

- Ժամանակակից, միջազգային մակարդակով դրված և հուսալի վիճակագրական տվյալներով ազգային համակարգի հնարավորությունների զարգացմանը

- Տրանսպորտի ոլորտում ԵՄ հետ համագործակցման զարգացմանը, ԵՄ կցումը տրանսպորտային և հաղորդակցական ցանց, ինչպես նաև ԵՄ նորմերի և

չափանիշների ներդնմանը ճանապարհային, երկաթգծի, օդային և ծովային տրանսպորտում

- Տնտեսական ռեֆորմի գործընթացին, ինչպես նաև արդյունավեր գործող շուկայական էկոնոմիկային

Համաձայնագրի ստորագրող կողմերը պարտավորվում են կատարել փորձի և փորձագետային կարծիքների փոխանակում, ինչպես նաև ներդնել լավագույն պրակտիկան այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են պետական ֆինանսները, ֆինանսական, մոնետարային և արժույթի ոլորտը և տնտեսական վիճակագրությունը

- Ներքին ֆինանսական վերահսկման և պետական սեկտորի արտաքին հաշվեստուգման զարգացումը

Միասնական ծրագիր կազմելու ճանապարհով, տեղեկատվության և փորձի փոխանակմամբ, ինչպես նաև անձի փոխանակմամբ և նրա պատրաստվածությամբ տեղի կունենա գործառութայնորեն անկախ ներքին հաշվեստուգման մեխանիզմի մշակում և զարգացում:

Վրաստանի էներգետիկ անվտանգության, այդ թվում՝ Եվրոպական օրենսդրության հետ մերձեցումը և համագործակցման զարգացումը այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են էլեկտրոէներգետիկան, բնական գազի և նավթի հայթհայթումը և փոխադրումը, վերականգնվող էներգիան և էներգոարդյունավետությունը: Համաձայնագիրը նաև նախատեսում է Եվրոպայի էներգոտեխնիկական միավորման մեջ Վրաստանի անդամության հնարավորությունը:

- Շրջակա միջավայրի պահպանման ոլորտում եվրոպական չափանիշների աստիճանական ներդնումը, որի նպատակն է հանդիսանում անվտանգ միջավայրի պահպանումը, պաշտպանումը, բարելավումը և վերականգնումը:

Համաձայնագրի ստորագրող կողմերը պարտավորվում են մշակել բնության պահպանման միասնական ծրագրեր, ապահովել շրջակա միջավայրի կենսաբազմազանությունը և պաշտպանումը արդյունաբերական աղտոտումից: Օրենսդրական մերձեցումը տեղի է ունենում շրջակա միջավայրի այնպիսի հատվածներում, ինչպես. օդի և ջրի որակը, թափոնների և թունաքիմիկատների կառավարումը, արտաքին միջավարի վրա ազդեցության գնահատումը և շրջակա միջավայրի ռազմավարական գնահատումը:

- Համագործակցման խորացումը կլիմայի փոփոխման դեմ պայքարի տեսանկյունից:

Դրա հետ կապված, Վրաստանը և Եվրամիությունը մշակում են ցածր ածխածնային բովանդակության տեխնոլոգիաներ և նպաստում են դրանց օգտագործմանն ու տարածմանը:

- Եվրոպական չափանիշների և նորմաների աստիճանական ներդնումը արդյունաբերության ոլորտում:

Վերոհիշյալը ենթադրում է բիզնես միջավայրի բարելավում, ինչպես նաև փոքր և միջին բիզնեսի զարգացում: Համապատասխանաբար, ենթադրում է Եվրամիության շուկայում արդյունաբերական արտադրանքի արտահանման աճ, ինչպես նաև վրացական արդյունաբերական արտադրանքի ներդնում այդ շուկայում:

- Համագործակցման խորացումը կորպորատիվ իրավունքի, հաշվապահության, հաշվեստուգման, կորպորատիվ կառավարման ոլորտներում

Նշվածի նպատակն է ապրանքի շրջանառության և տնտեսական համագործակցման բարձրացումը Վրաստանի և Եվրամիության միջև:

- Համագործակցման զարգացումը ֆինանսական, բանկային և ապահովագրական ծառայությունների ոլորտում:

Վերոհիշյալը ենթադրում է ֆինանսական ծառայության կարգավորման մշակում՝ բաց շուկայական էկոնոմիկայի, արդյունավետ և համապատասխան ներդրումների պաշտպանության և վերահսկողության անկախ ու արդյունավետ մեխանիզմի ստեղծման համար:

- Էլեկտրոնային հաղորդակցման ոլորտում համագործակցման խորացումը ազգային կարգավորիչի անկախությունն ապահովելու և վարչական ներուժի ուժեղացման համար:

Համաձայնագիրը նաև ենթադրում է սահմանում մթերային շուկայի և էլեկտրոնային կապի ոլորտներում, որոշումների բողոքարկման համար արդյունավետ մեխանիզմների ստեղծում, անձնական տվյալները մշակելու գործընթացում անձեռնմխելիության և գաղտնիության ապահովում:

- Համագործակցման խորացումը զբոսաշրջիկության բնագավառում

Միջոցառման պլանավորումը իր առջև նպատակ է դնում զբոսաշրջիկության ներուժի աճ և երկրում զբոսաշրջիկների հոսքի ավելացում:

- Գյուղատնտեսության բնագավառում եվրոպական նորմերի և չափանիշների աստիճանական ներդնում

Նշվածը նաև ենթադրում է վարչական հնարավորությունների զարգացում կենտրոնական և տեղական մակարդակով, պլանավորում, գնահատում և համապատասխան գյուղատնտեսական քաղաքականության կարգավորումների և լավագույն պրակտիկայի իրագործում:

- Համագործակցման խորացում, ձկնորսության բնագավառում, տրված ռեսուրսների, ճիշտ կառավարման, հսկողության, տվյալների հավաքման և անօրեն ձկնորսության դեմ պայքարի պահպանման հարցերում

Ստորագրող կողմերը կնպաստեն Սևծովյան տարածաշրջանին և ձկնորսությանը համապատասխան կազմակերպությունների միջև համագործակցմանը

- Համագործակցման զարգացում գիտական հետազոտությունների և տեխնոլոգիայի ոլորտներում

Կողմերը պարտավորվում են իրականացնել մտավոր սեփականության համապատասխան և արդյունավետ պաշտպանություն, ստեղծել միասնական գիտահետազոտական ծրագրեր, անցկացնել վարժանքներ և ծրագրերի փոխանակում գիտնականների, հետազոտողների և այլ կարգի գիտահետազոտական աշխատողի համար

- Օգտատիրոջ իրավունքի պաշտպանում

Վերոհիշյալը ենթադրում է համապատասխան օրենսդրության կատարելագործում և Եվրամիության համապատասխան չափանիշների ներդնում, Վրաստանի և Եվրամիության օգտատերերի իրավունքների պաշտպանության անկախ ասոցիացիաների միջև հաղորդակցման խորացում, ինչպես նաև տեղեկատվության և փորձի փոխանակում

- Համագործակցման խորացում զբաղվածության, սոցիալական պաշտպանության և հավասար իրավունքների ոլորտում

Վրաստանը կկատարի աստիճանական օրենսդրական մերձեցում երկրում աշխատանքի արժանի պայմաններ ստեղծելու համար: Այդ նպատակով կմշակվի Եվրամիության չափանիշներին համապատասխան աշխատանքի տեղավորման հատուկ քաղաքականություն, բանվորի անվտանգության նորմաներ, ինչպես նաև հակախտրական մեխանիզմներ և սոցիալական պաշտպանության մեխանիզմներ: Բացի վերոհիշյալից, նաև ապահովված կլինեն սոցիալական ընդգրկումը և գենդերյան հավասարությունը:

- Արդիականացման համակարգի և եվրոպական չափանիշների աստիճանական ներդնումը

Նշվածը նշանակում է առողջապահության ոլորտում ռեֆորմների երկարացնելը, համատեղ ծրագրերի կազմում և առողջապահության բարձր որակի ապահովում: Օրենսդրական մերձեցումը տեղի կունենա այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են . մարդկային ռեսուրսների զարգացում, կառավարման և ֆինանսավորման կատարելագործում, համաճարակային վերահսկում և ինֆեկցիոն հիվանդությունների հսկողություն, արտակարգ իրավիճակներին պատրաստակամություն, արհեստական նյութերի որակ և անվտանգություն, ինչպես նաև ոչ ինֆեկցիոն հիվանդությունների հսկողություն:

- Կրթության որակի բարձրացում և, այդ նպատակով օրենսդրական ներդաշնակության, որակավորման և իրավասությունների միասնական շրջանակների ստեղծում, ինչպես նաև եվրոպական համակարգի և կրթական բալերի ներդնում:

- Համագործակցման խորացումը մշակույթի ոլորտում

Նշվածը ենթադրում է երկխոսության վարում մշակույթի քաղաքականության, մշակութային բազմազանության պահպանությանը նպաստելու, արվեստի և արվեստագետների շարժականությանը նպաստելու, համարժեք պաշտպանությանը և պատմական և մշակութային ժառանգության պահպանմանը համապատասխան Եվրամիության լավագույն փորձի, երկրի կենսունակ զարգացման մասին

- Եվրոպական չափանիշների ներդնումը տեսա-լսողական ոլորտներ և ԶԼՄ-ների ոլորտ, Եվրոպական չափանիշների փուլային լսա-տեսողական ոլորտ, և լրատվության ոլորտ,

ԶԼՄ-ների անկախության բարձրացումը, պրոֆեսիոնալների ուսուցում, կողմերի միջև տեղեկատվությունների պարբերաբար փոխանակում, ինչպես նաև կինոյի և հեռուստատեսության ոլորտում տեղական արտադրանքի խրախուսում

- ԵՄ փիրձի փոխանակում սպորտի և ֆիզիկական ակտիվության ոլորտում և լավագույն պրակտիկայի ներդնում

Այս նպատակի իրականացման համար կողմերը կօժանդակեն առողջ ապրելակերպին, սպորտի և սպորտսմենների սոցիալական և կրթական արժեքներին և շարժականությանը: Նաև կանխարգելիչ միջոցներ կձեռնարկեն դոպինգի և սպորտում ռասիզմի ու բռնության դեմ:

- Երկխոսության խորացում և համագործակցում Եվրամիության քաղաքացիական կազմակերպությունների և Վրաստանի միջև

Վերոհիշյալի նպատակով համաձայնագրի ստորագրող կողմերը պարտավորվում են պետական կառուցվածքի և քաղաքացիական հասարակության միջև բաց, թափանցիկ երկխոսության ճանապարհով ապահովել քաղաքացիական հասարակության լիիրավ մասնակցություն կարևոր պետական որոշումներ ընդունելու գործընթացում

- Տարածաշրջանային զարգացման գործուն և արդյունավետ քաղաքականության մշակում և իրականացում տարածաշրջանային զարգացման գործընթացում ներգրավված բոլոր կողմերի միջև գործընկերության կոնսոլիդացիայի և ինքնակառավարման ուժեղացման ճանապարհով: Բացի դրանից, կողմերը կմշակեն տարածաշրջանային զարգացման միասնական ծրագիր:

- Համագործակցման խորացում բնական և արհեստական աղետների ոլորտում

Համաձայնագրի ստորագրող կողմերը պարտավորվում են անհետաձգելի անհրաժեշտության դեպքում ապահովել համակարգված օգնություն, նաև իրականացնել տեղեկատվության կանոնավոր փոխանակում, այդ թվում՝ արտակարգ իրավիճակի դեպքում երրորդ երկրին ցուցաբերած օգնության մասին

- Վրաստանի մասնակցությունը ԵՄ ծրագրերում և գործակալություններում, ինչը կստեղծի նոր հնարավորություններ ԵՄ-ի հետ այդ հարցով ճյուղային համագործակցման խորացման համար:

ԵՄ ծրագրերում մասնակցելը կօժանդակի վրաց կառավարության ջանքերին ռեֆորմներ ընդունելու գործընթացում, ինչպես նաև ԵՄ օրենսդրությանը մերձենալում և տարբեր ոլորտներում լավագույն եվրոպական փորձի կիսմանը:

10. *«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիրը» և նրա իրականացման գործընթացի ժամանակ գոյություն ունեցող մարտահրավերները*

Վրաստանի և Եվրամիության միջև քաղաքական երկխոսության խորացման հեռանկարը

«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիրը» ենթադրում է Վրաստանի և Եվրամիության միջև երկխոսության խորացումը ընդհանուր շահերի բոլոր ոլորտներում, ներառյալ արտասահմանյան հարցերը, անվտանգության և ներքին պետական ռեֆորմները, ինչը նպաստում է Վրաստանի և Եվրամիության միջև հարաբերությունների ամրապնդմանը հավակնոտ և նորարարական ճանապարհներ գտնելու օգնությամբ:

«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագրի» իրականացման մոնիտորինգի նպատակով ստեղծված է ասոցիացիաների խորհուրդ (նախարարների մակարդակով): «Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագրի» օգտագործումն և կատարման դիտարկումից և մոնիտորինգից բացի, խորհուրդը, համաձայնագրի շրջանակներում կվերանայի ցանկացած կարևոր և ընդհանուր շահերի ոլորտները, այլ երկկողմանի կամ բազմակողմանի հարցեր՝ ծագած համաձայնագրի շրջանակներում: Խորհրդի որոշումները կողմերի համար կլինեն պարտադիր:

Ասոցիացիայի կոմիտեն (նախարարների տեղակալների մակարդակով) կօգնի ասոցիացիայի խորհրդին իրենց պարտականությունները և ֆունկցիաները կատարելու հարցում: Կոմիտեն նաև հատուկ ձևով կհավաքվի (այսպես կոչված առևտրի կոմիտե), որպեսզի վերանայի բոլոր հարցերը՝ կապված համաձայնագրի առևտրի և առևտրի հետ:.

Ասոցիացիայի կոմիտեին կօգնեն հատուկ ստեղծված թեմատիկ ենթակոմիտեները: Ենթակոմիտեները կհավաքվեն պետական պաշտոնյաների մակարդակով և կվերանայեն կոնկրետ բնագավառի հետ կապված հարցեր: «Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագրի» հարցով կարծիքների փոխանակման նպատակով վրացական և եվրոպական խորհրդարանի անդամների կողմից կազմակերպված է ասոցացման խորհրդարանական կոմիտե: Ասոցիացիայի խորհրդարանական կոմիտեն կարող է ասոցիացիայի կոմիտեից

համապատասխան տեղեկատվություն պահանջել համաձայնագրի իրականացման մասին: Ասոցիացիայի խորհրդարանական կոմիտեն կարող է ստեղծել ենթակոմիտեներ:

«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիրը» և քաղաքացիական հասարակությունը»

Նշանակալից է այն հանգամանքը որ «Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիրը» քաղաքացիական հասարակությանը համաձայնագրի իրականացման և այն ընթացք տալու նպատակով նախատեսում է քաղաքացիական հասարակության պլատֆորմների ստեղծում, որը Եվրամիության կողմից կազմված է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից, ներառյալ Եվրոպայի տնտեսական և սոցիալական կոմիտեի անդամները և Վրաստանի կողմից քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, ներառյալ Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի Ազգային պլատֆորմի ներկայացուցիչները: Քաղաքացիական հասարակության պլատֆորմը տեղեկացված կլինի Ասոցիացիայի խորհրդի որոշումների և հանձնարարականների մասին: Քաղաքացիական հասարակության պլատֆորմը կարող է Ասոցիացիայի կոմիտեին տալ երաշխավորագրեր: 2015 թվականի սեպտեմբերին ավարտվեց քաղաքացիական հասարակության պլատֆորմի վրացական մասի կազմավորումը, որը բաղկացած է 18 մարդուց:

«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիրը» և Վրաստանի օրենսդրության մերձեցումը Եվրամիության օրենսդրությանը

«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագրի» որոշ գլուխներ ունեն հավելվածներ (ընդամենը 34), որոնցում նկարագրված են ԵՄ կոնկրետ իրավական ակտեր և նրանց հետ Վրաստանի օրենսդրության մերձեցման ժամկետները: Համապատասխանաբար, Վրաստանի օրենսդրության մերձեցումը Եվրամիության օրենսդրությանը տեղի կունենա աստիճանաբար, պայմանավորված ժամկետներին համապատասխան:

Համաձայնության դեպքում Վրաստանը պարտավորվում է համապատասխան ոլորտում պրոգրեսիվ կերպով մոտեցնել Վրաստանի օրենսդությունը Եվրամիության օրենսդրությանը և նրա արդյունավետ իրականացման պարագայում նաև

պարտավորվում է համապատասխանաբար զարգացնել իր վարչական և ինստիտուցիոնալ ենթակառուցվածքը: Իր հերթին, Եվրամիությունը սրան օժանդակելու համար, Վրաստանին համապատասխան քաղաքական, տեխնիկական և ֆինանսական օգնություն կցուցաբերի:

Նպատակներին հասնելու համար, որոշակի համաձայնությամբ, Եվրամիության տեխնիկական և ֆինանսական աջակցումը կիրականացվի հատուկ մեխնիզմների և գործիքների միջոցով: Վրաստանը նաև ակտիվացնում է համագործակցությունը Եվրոպական ներդրումային բանկերի և զարգացման բանկերի հետ, ինչպես նաև այլ միջազգային ֆինանսական ինստիտուտների հետ:

«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագրի» իրականացման գործում Վրաստանին օգնություն կցուցաբերեն նաև ԵՄ անդամ- պետությունները և ուրիշ դոնորներ սեփական օնության ծրագրի օգնությամբ:

«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիրը» և վրացական Աբխազիայի և Ցխինվալիի տարածաշրջանները/Հարվօսեթական տարածաշրջաններ

«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիրը» տարածվում է՝ մի կողմից Եվրամիության ողջ տարածքի վրա, մյուս կողմից՝ Վրաստանի միջազգայնորեն ճանաչված սահմանների վրա:

Համաձայնագրի կիրառումը Ափխազիայի և Ցխինվալիի/Հարավօսեթյան տարածաշրջանի վրացական տարածքի վրա, որտեղ Վրացական կառավարությունը արդյունավետ չի հսկում, կսկվի այն բանից հետո, երբ վրաց կառավարությունը կապահովի համաձայնագրի լրիվ իրականացումը երկրի ողջ տարածքի վրա: Նշվածը բացատրվում է նրանով, որ համաձայնագրով նախատեսված բոլոր իրավունքները կիրառելու համար անհրաժեշտ է իրականացնել համապատասխան պարտականությունները: Դրան համապատասխան օկուպացված տարածքներում համաձայնագիրը կտարածվի այն դեպքում, երբ Վրաստանը կկարողամա իրականացնել համապատասուսն պարտականություններն այդ տարածքների վրա:

«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագրի» նախաստորագրումը կատարվեց 2013 թվականի նոյեմբերի 29-ին

«Արևելյան գործընկերության»Վիլնյուսյան գագաթաժողովում: Ստորագրումը՝ 2014 թվականի հունիսի 27-ին: Համաձայնագրի ստորագրումից հետո այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ էր համաձանագրի լիիրավ վավերացում Վրացական խորհրդարանի, Եվրախորհրդարանի և ԵՄ անդամ պետությունների Ազգային խորհրդարանի կողմից: ԵՄ վերջին անդամ-երկիրը՝ Բելգիան, համաձայնագիրը վավերացրեց 2015 թվականի դեկտեմբերին:

Համաձայնագիրը ստորագրելուց հետո, մինչ նրա լիովին ուժի մեջ մտնելը, իրականացվում էր ԵՄ իրավասության մեջ մտնող հարցերից ժամանակավոր օգտվելը: Ժամանակավոր օգտվելը վերաբերվում էր ազատ առևտրի խոր և համապարփակ գոտուն (ապրանքի և ծառայությամբ առևտուր, սանիտարային և բուսասանիտարային նորմաներ, մտավոր սեփականություն, մրցակցության քաղաքականություն և ուրիշներ), համաձայնագրի մի քանի այլ հոդվածներին, նաև ճյուղային համագործակցման ղեկավարների մեծամասնությանը (օրինակ, տրանսպորտը, էներգետիկան շրջակա միջավայրի պաշտպանություն և այլն) և համաձայնագրի մի քանի այլ հարցերին (այդ թվում՝ ինստիտուցիոնալ դրույթները, որոնք հաշվի են առնում Վրաստանի և Եվրամիության միջև երկխոսության ինստիտուցիոնալ հզորացումը):

«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագրի» իրականացման նպատակով ամեն տարի ընդունվում է օրակարգ Վրաստանի և Եվրամիության միջև, որի նպատակն է օգնություն «Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագրի» արդյունավետ իրականացմանը: Ասոցիացիայի օրակարգը ներկայացնում է «Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագրի» շրջանակներում վերցրած պարտավորությունների իրականացման գերակա հարցերի պլանը: 2015 թվականից քաղաքացիական հասարակության Ազգային պլատֆորմի ֆորումի ձևաչափում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները հնարավորություն ունեն մասնակցելու ասոցիացիայի օրակարգի ձևակերպմանը: